ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի հունիսի 9-ին

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 8. Առողջապահության ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների մասնավորեցմանը ներկայացվող պահանջները

1. Սույն ծրագրի մաս հանդիսացող 1-ին հավելվածում ընդգրկված առողջապահական ընկերությունների, բացառությամբ նույն հավելվածի 7-րդ կետով նախատեսված ընկերության, մասնավորեցումը չի կարող հանգեցնել այդ ընկերությունների գործունեության հիմնական ուղղության կամ հանրային նշանակության փոփոխությանը կամ որևէ կերպ նվազեցնել դրանց գործունեության հանրային օգտակարությունը (այդ թվում՝ մատուցվող բժշկական ծառայությունների որակի և մրցունակության ապահովման առումով):

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պահանջն ամրագրվում է տվյալ պետական մասնակցությամբ ընկերության մասնավորեցման պայմանագրում՝ որպես գործարքի շրջանակներում կառավարության և մասնավոր սեփականատիրոջ կամ ներդրողի իրավատնտեսական հարաբերությունների կարգավորման գլխավոր նախապայման: Այն պահպանում է իր իրավական ուժն ընկերության գործունեության ամբողջ ընթացքում՝ անկախ սեփականատիրոջ փոփոխությունից:

Հավելված 1

ՑԱՆԿ

2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՆԱԽՈՐԴ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ)

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն			
31.	*(կետն ուժը կորցրել է 19.06.19 ՀՕ-84-Ն)*		
32.	90108	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ	ք. Երևան, Նորք-Մարաշ 9 փ., 123
33.	*(կետն ուժը կորցրել է 19.06.19 ՀՕ-84-Ն)*		
34.	*(կետն ուժը կորցրել է 04.12.19 ՀՕ-259-Ն)*		
35.	90111	«Օշական» մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ	Արագածոտնի մարզ, գ. Օշական
36.	90112	«Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային առողջարան» ՓԲԸ	ք. Դիլիջան, Օրջոնիկիձե 5-րդ նրբ., տ. 1
37.	90113	«Երևանի երկաթուղու պոլիկլինիկա» ՓԲԸ	ք. Երևան Արցախի

			8բ
38.	90114	«Նևրոզների կլինիկա» ՓԲԸ	Կոտայքի մարզ, գ. Քասախ, Ռ. Սաֆարյան 10
39.	90115	«Հանրապետական անձավաբուժական կենտրոն» ՓԲԸ	ք. Երևան, Աճառյան 2, փակուղի 4
40.	90116	«Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Երևան, Մամիկոնյանց 30
41.	~~90075~~	~~«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ~~	~~ք. Երևան, Մ. Մկրտչյան 5~~